ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3151-Ա « 07 » օգոստոսի 2025թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246

Հավելված
Երևանի քաղաքապետի
07.08.2025թ.
հ. 3151-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Վիգեն Ավունջյան	Ն. Գոգոլի փողոց, հ.129/2 և հ.129/4	հողամաս	Վիգեն Ավունջյանին սեփականության իրավունքով պատկանող, Ն. Գոգոլի փողոցի հ.129/2 և հ.129/4 հասցեներում գտնվող հողամասերին և դրանց վրա առկա շինություններին /վկ. հ.25022025-01-0119 և հ.10062025-01-0306/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Ն. Գոգոլի փողոց, հ.129/2	01123CJMGAKA	
2	Արամ Խաչատրյան	Հանրապետության փողոց, հ.49 շենք, 1-ին մուտք	նկուղ	Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 16.07.2025թ. հ.18609 վկայագրով, Արամ Խաչատրյանին փոխանցված ժառանգական գույքին՝ Հանրապետության փողոցի հ.49 շենքի 1-ին մուտքում գտնվող նկուղին տրամադրել հասցե՝ Հանրապետության փողոց, հ.49 շենք, հ.28	01063837NPMV	
3	Հայկ Ապրեսյան /լիազորված անձ/ Պետիկ Թովմասյան	Նուբարաշեն 17-րդ փողոց	հողամաս	Նուբարաշեն 17-րդ փողոցում գտնվող հողամասին /հիմք՝ Երևանի քաղաքապետի 30.01.2013թ. հ.295-Ա որոշում/ տրամադրել հասցե՝ Նուբարաշեն Ա-20 թաղամաս, հ.7	01103ZQAFNCT	
4	Սուսաննա Սիմոնյան, Գևորգ և Տիգրան Նալչյաններ	Այգեստան թաղամաս, 11-րդ փողոց, հ.177/7	բնակելի տուն	Սուսաննա Սիմոնյանին, Գևորգ և Տիգրան Նալչյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Այգեստան թաղամասի 11-րդ փողոցի հ.177/7 հասցեում գտնվող բնակելի տան /վկ. հ.07022025-01-0020, 244.7քմ և 21.5քմ ընդ. բաժնային հող/ բաժանման հատակագծով առանձնացվող 119.1քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Գևորգ Ջահուկյան փողոց, հ.177/6	01063R6BYHLB	
5	Սուսաննա Սիմոնյան, Գևորգ և Տիգրան Նալչյաններ	Այգեստան թաղամաս, 11-րդ փողոց, հ.177/7	բնակելի տուն	Սուսաննա Սիմոնյանին, Գևորգ և Տիգրան Նալչյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Այգեստան թաղամասի 11-րդ փողոցի հ.177/7 հասցեում գտնվող բնակելի տան /վկ. հ.07022025-01-0020, 244.7քմ և 21.5քմ ընդ. բաժնային հող/ բաժանման հատակագծով առանձնացվող 117.4քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Գևորգ Ջահուկյան փողոց, հ.177/5	01063P5ECU2N	

6	Սուսաննա Սիմոնյան, Գևորգ և Տիգրան Նալջյաններ	Այգեստան թաղամաս, 11-րդ փողոց, հ.177/7	բնակելի տուն	Սուսաննա Սիմոնյանին, Գևորգ և Տիգրան Նալջյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Այգեստան թաղամասի 11-րդ փողոցի հ.177/7 հասցեում գտնվող 172.5քմ մակերեսով բնակելի տանը /վկ. հ.07022025-01-0020, 308.8քմ սեփական և 21.5քմ ընդ. բաժնային հող/ տրամադրել հասցե՝ Գևորգ Ջահուկյան փողոց, հ.177/4	01063WTDVAUT	
7	Գագիկ Մշեցյան	Տաշքենդի փողոց, հ.3/2 և հ.3/3	հողամաս	Գագիկ Մշեցյանին սեփականության իրավունքով պատկանող, Տաշքենդի փողոցի հ.3/2 և հ.3/3 հասցեներում գտնվող հողամասերին /վկ. հ.10072025-01-0087 և վկ. հ.28072025-01-0106 / ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Տաշքենդի փողոց, հ.3/2	01023P6PFKDB	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246